

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/5

12 ապրիլի 2016 թ.

Քննարկվեց «Պալիտրա Արտ» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.02.2016թ-ի թիվ 0594/01 որոշման դեմ:

«Պալիտրա Արտ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Փոստային բաժանմունքի միջոցով 04.03.2016թ-ին «Պալիտրա Արտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) ստացել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.02.2016թ-ի Հարկ վճարողից չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 0594/01 որոշումը:

Համաձայն վերը նշված որոշման «Պալիտրա Արտ» ՍՊԸ-ից պետք է գանձվի 28.12.2015թ-ի թիվ 5012780 ստուգման ակտով առաջացած 7.780.977 ՀՀ դրամ գումարը:

Չանրադառնալով այն հանգամանքին, որ նույն ստուգման ակտով արձանագրված լրացուցիչ պարտավորությունների հետ մեկտեղ նաև արձանագրվել է պակասեցման ենթակա 1.439.812 ՀՀ դրամ հարկի գումար, որը սակայն չի արտացոլվել կայացված որոշման մեջ, հարկ է նշել, որ 28.12.2015թ-ի թիվ 5012780 ստուգման ակտն ամբողջությամբ ընկերության կողմից դեռևս 22.02.2016թ-ին վարչական կարգով բողոքարկվել է ՀՀ ՖՆ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով և ներկա պահին գտնվում է ընթացքի մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.02.2016թ-ի թիվ 0594/01 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 17.11.2015թ-ի թիվ 5012780 հանձնարարագրի համաձայն «Պալիտրա Արտ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 28.12.2015թ. թիվ 5012780 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 7.780.977 դրամ, ինչպես նաև 1.439.812 դրամ հետ վերադարձման գումար:

22.02.2016թ-ին Ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել գանգատ Ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ, որն ընդունվել է վարույթ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը:

Տվյալ դեպքում ընկերության կողմից ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 28.12.2015թ-ի թիվ 5012780 ակտը վարչական կարգով բողոքարկվելու հանգամանքը վկայում է այն մասին, որ այն դեռևս չի դարձել անբողոքարկելի վարչական ակտ, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով պետք է կասեցվեին Ակտի կատարմանն ուղղված գործողությունները: Սակայն, ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.02.2016թ-ին (մինչև Հանձնաժողովի կողմից գանգառի վերաբերյալ որոշում կայացնելը) ընդունվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 0594/01 որոշումը, որով բացառապես գանձման են առաջադրվել ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 28.12.2015թ-ի թիվ 5012780 ակտով արձանագրված լրացուցիչ պարտավորությունները: Այսինքն, Որոշումն ընդունվելիս հաշվի չի առնվել Ակտը վարչական կարգով բողոքարկված լինելու և դեռևս բողոքարկման փուլում գտնվելու հանգամանքը:

Հանձնաժողովի համոզմամբ վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.02.2016թ-ի թիվ 0594/01 որոշումը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ: Հետևապես, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, այն ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.02.2016թ-ի թիվ 0594/01 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

